ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի (արտոնագիր 846) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի 25.12.2014թ. տրված տեղեկանքի համաձայն «Հայկական ժամանակ» օրաթերթի 25.12.2014թ. #229 (3613) համարի 4-րդ էջի «Լուր» բաժնում տպագրվել է ***«պլան փաստաբան»*** վերտառությամբ հրապարակումը (**այսուհետ՝ Հրապարակում**), հետևյալ բովանդակությամբ. *«Դեկտեմբերի 23-ին ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին այցելության գնացած փաստաբանի մոտ թմրանյութ է հայտնաբերվել: ՀՀ քննչական կոմիտեից երեկ մեզ փոխանցեցին, որ դեկտեմբերի 23-ին, ժամը 17:45-ին «Արթիկ» ՔԿՀ-ում զննության է ենթարկվել դատապարտյալին տեսակցության գնացած փաստաբանի ձեռքի պայուսակը, որի մեջ առկա են եղել չորս հատ բջջային հեռախոսի լիցքավորիչներ: Երեք լիցքավորիչի միջից հայտնաբերվել են կասկածելի զանգվածով փաթեթներ եւ ուղարկվել փորձաքննության: Որոշ ժամանակ անց՝ փաստաբանը փորձել է ազատվել իր մոտ պահված եւս մեկ լիցքավորիչից, սակայն ՔԿՀ-ի աշխատակիցները կանանց զուգարանում հայտնաբերել են լիցքավորիչ, որի մեջ եղել է կասկածելի զանգվածով թվով երեք փաթեթ: ՀՀ քննչական կոմիտեից փոխանցեցին, որ Արթիկի քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվում: Փաստաբանը դեպքի առթիվ բացատրություն է տվել ու նշել, որ լիցքավորիչները իրեն է տվել անծանոթ մի տղամարդ: Նա նաեւ հայտարարել է, որ զուգարանում հայտնաբերված լիցքավորիչը ինքն է նետել, երբ քրեակատարողականի աշխատակիցները հայտնաբերել են նախորդ երեքը: Դեպքի առթիվ նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն, եզրակացությունը դեռեւս չի ստացվել: Մեր տեղեկություններով, ընդհանուր առմամբ, լիցքավորիչների միջից հայտնաբերվել է 70 գրամից ավելի զանգված, որը, նախնական տվյալներով, թմրանյութ է: Երեկ մեզ հաջողվեց ճշտել, որ դատապարտյալին՝ Արտյոմ Պողոսյանին այցելած փաստաբանը Ռուբիկ Մովսիսյանն է, ով փաստաբանական գործունեությամբ է*

25 **դեկտեմբերի 2014թ.**
թիվ 428-**Ա/ԿԳ**-14167

զբաղվում 2008 թվականից: Նա պաշտպանել էր Արտյոմ Պողոսյանի շահերը, ով մեղադրվել է սպանություն կատարելու մեջ եւ դատապարտվել 7 տարվա ազատազրկման:»:

Գտնում եմ, որ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***<u>փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝</u>*** *պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները),* ***<u>ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները</u>:***

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև Կանոնագիրք**) 6.2.1 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում պահպանել սահմանված կարգը և իր վստահորդին կամ այլ անձի չփոխանցել արգելված իրեր:***

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ»-ի թիվ 2 ձևի «Իրերի, առարկաների և սննդամթերքի, որոնք արգելվում են ունենալ կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով» ցանկի 3-րդ կետի համաձայն՝ արգելված իրերի ցանկում է ներառված **ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց** (**բջջային հեռախոս**, **բջջային հեռախոսի լիցքավորման սարք**, **բաժանորդային քարտ և այլ մասեր ու պարագաներ**, **ռացիա և այլն**), **բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների**:

Հրապարակման մեջ նշված արարքը՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ Արտյոմ Պողոսյանին այցելության ժամանակ ձեռքի պայուսակում չորս հատ բջջային հեռախոսի լիցքավորիչներ տեղափոխելու (հանձնման նպատակով) գործողությունը փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի կողմից կատարելու մասին տեղեկատվությունը հաստատվելու դեպքում՝ փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի վարքագիծն առերևույթ կարող է հակասել Կանոնագրքի 6.2.1 ենթակետի պահանջին:

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը զուր չէ արգելված իրերի փոխանցման արգելք նախատեսում փաստաբանի համար (անկախ այն հանգամանքից, որ այլ իրավական ակտով այդպիսի արգելք կա), քանի որ այդ արարքով փաստաբանը կարող է հայտնվել առավել վտանգավոր իրավիճակում (օրինակ, երբ չիմանալով փոխանցում է այնպիսի առարկա, որի առկայությունը փաստաբանի մոտ ինքնին քրեաիրավական հետևանքներ կարող է առաջացնել): Նման արարքը կարող է ազդել ոչ միայն արարքը կատարած, այլ նաև մյուս փաստաբանների հեղինակության վրա:

<u>Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է՝</u> *փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի կողմից՝ 23.12.2014թ. քրեակատարողական հիմնարկ արգելված իր՝ չորս հատ բջջային հեռախոսի լիցքավորիչներ տեղափոխելու վարքագիծը ստուգելու նպատակով:*

Հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի (արտոնագիր թիվ*** *846)* ***նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի*** *6.2.1* ***ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-***14167*):*

2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Իրինա Փիլոյանին՝***

– ***կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.***

– ***սույն որոշման օրինակն ուղարկել փաստաբան Ռուբիկ Մովսիսյանին՝ պարզաբանելով նրան՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները.***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

25 **դեկտեմբերի 2014թ.**
թիվ 428-**Ա/ԿԳ**-14167
ք.Երևան